№ 27 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 5 ՓԵՏՐՎԱՐԻ

1913
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 5 ՓԵՏՐՎԱՐԻ № 27

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տելեֆօն № 2—58.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.

Տպարանի տելեֆօն № 67.

ՊԱՊԻՐՈՍՆԵՐ ԳԱԼԼԻԱ „ԿՈՄԷՏԱ" ԸՆԿ.
25 հատը—15 կոպ., 10 հատը—6 կոպ. (ե. ու.)
— ԹԻՖԼԻՍՈՒՄ: —
986. 0—13

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Երեքշաբթի, փետրվարի 5-ին
ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՒՄԲԸ կը ներկայացնէ
ՄԻՐՐԱ ԷՖՐՈՍ
Պիէս 4 արար., հեղ. Գորդինի, թարգմ. Վ. ք. Տէր-Ղևոնդեանի:
Մասնակցում են. տ. տ. Արուսեակ, Գուլազեան, Զաբէլ, Մայսուրեան, Ցասմիկ, պ. պ. Բերոյեան, Լաքս, Ղազարեան, Մամիկոնեան, Մանուէլեան, Ցարութիւնեան և ուրիշները:
Սկիզբն է երեկոյեան ժամը 8-ին:
Ռեժիսեօր՝ Ա. ԱՐՄԷՆԵԱՆ
91. 1—1

Բեռլինի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
Ներքին հիւանդութիւններ՝ առանձնապէս կրծքի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի: Բժշկութիւն նաև տուբերկուլիններով, ՌԱԴԻՒ պրէպարատներով և վերարուժական միջոցով՝ պնևմօտօրաքսով: Ընդունելութիւնը ամեն օր, առաւօտեան ժամը 9—11-ը և երեկոյեան ժամը 5—8-ը:
Չքաւորներին առ. ժամը 9—10-ը ձրիաբար:
Սօլօլակ, Բէհբութեան փող. № 23 (անկիւն Դաւիդովսկայա): Հեռախօս 7—92.
(ա.փ.) առ. 92. 100—1

ԲԺԻՇԿ
Ց. Մելիք-Նուբարեան
ներքին և երեխաների հիւանդութիւններ, առանձնապէս Թոքերի:
Թոքախտի բժշկութիւնը տուբերկուլիններով և պնևմատօրակսով:
Ընդունելութիւնը ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ
Ամեն օր (առաւօտեան 12—1 ժ.
(երեկոյեան 5—7 ժ.
Սօլօլակ, Ռուիշչեվսկայա 10 (Լերմոնտովսկ. դեղատան դիմացը):
(ե. հ. կ.) առ. 746. 100—52

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ ԿՈՄԻՏԷՏԸ

սրանով յայտարարում է, որ, Բանկի կանոնադրութեան § 5-ի համաձայն, Բանկի բացման համար ակցիաների արժէքի առաջին կէս-վճարը լրացնելու համար
40% ՎՃԱՐԸ, ՈՐ ԿԱԶՄՈՒՄ Է 100 ՌՈՒԲԼԻ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԱԿՑԻԱՅԻՑ,
կընդունվի Պետական Բանկի Թիֆլիսի Գրասենեակում, Կազմակերպիչ Կոմիտէտի № 30079 առաջին ընթացիկ հաշւով, սկսած
ՆԵՐԿԱՅ ՓԵՏՐՎԱՐԻ 11-ԻՑ ՄԻՆՉԵՒ 20-Ը ՆՈՅՆ ԱՄՍԻ:

Յիշեալ 40%-ը Պետական Բանկի Գրասենեակը մուծելիս անհրաժեշտ է ներկայացնել նաև 10% վճարի համար տրված անդորրագիրը, որից յետոյ թէ այդ անդորրագիրը և թէ 40% վճարի համար ստացված անդորրագիրը պէտք է ներկայացնել Կազմակերպիչ Կոմիտէտի դիւանատունը՝ համապատասխան մակագրութիւնների համար, նախքան ժամանակաւոր վկայականի տրվելը:

Օտար քաղաքների բաժնետէրերը յիշեալ վճարումը պիտի կատարեն անմիջական կերպով, փոխադրելով դրամը Պետական Բանկի Թիֆլիսի Գրասենեակը՝ Կազմակերպիչ Կոմիտէտի № 30079 ընթացիկ հաշւին անցկացնելու, կամ թէ ուղարկել Կոմիտէտի նախագահ ԱՐՇԱԿ Ն. ՄԻԼԵԱՆԻ անունով, ընդ որում 10% վճարի համար տրված ժամանակաւոր անդորրագրերը պէտք է միաժամանակ ուղարկել Կազմակերպիչ Կոմիտէտին մակագրելու համար:

Կազմակերպիչ Կոմիտէտի Դիւանատան հասցէն. Тифлисъ. Бебутовская ул. № 50, д. Тифлисскаго Купеческаго Общества.
(5,10) 84. 3—2

ԲԺԻՇԿ
Ե. Ի. ՄԻՆԱՍԵԱՆՑ
Ներքին, երեխայոց և ստամոքսա-աղիքային հիւանդութիւններ:
Պրոֆ. Mathieu-ի մասնագիտական կլինիկայից—Պարիզից
Ընդունելութիւնը (առաւ. ժ. 9—11-ը:
(երեկ. ժ. 5—7-ը:
Միխայլովսկի պր. 86, տելեֆ. № 576.
(ե.հ.կ.) առ. 179. 100—88

ԲԺԻՇԿ
ԾՈՒԾԱՆԻԿ ՆԱԲԱԹԵԱՆ
Ընդունում է հիւանդներ կանանց և մանկաբարձութեան վերաբերեալ ամեն օր, բացի կիրակի օրերից, երեկ. ժամը 5—6-ը:
Հասցէն՝ Ռուիշչեվսկայա № 1.
առ. (կ. ե. հ.) 4. 100—14

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. Գ. ԿԷՕՆՃԵԱՆ
Ընդունում է ատամի և բերանի հիւանդութիւն ունեցողներին. պլոմբ, արհեստական ատամներ, ատամի հեռացում, (առանց ցաւի):
Ընդունելութիւն 9—2-ը առաւ., 4—7-ը երեկ.
Անկիւն Արաս-Արաղսկայա հրապարակի և Լերմոնտովսկայա փողոցի, № 1.
(ե.հ.կ.) առ. 849. 0—10

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

2 և 3 փետրվարի

Լոնդոն. — Համայնքների պալատ. Ստատս-սեկրետարի օգնական Օկլենդը, բացատրութիւն տալով պարսկական գործերի առիթով, մատնանշեց, որ մեջլիս գումարելը այժմ կարող էր վտանգաւոր լինել, բայց որովհետև Պարսկաստանում հաստատվել է կայուն կառավարական իշխանութիւն, ուստի անգլիական կառավարութիւնը յոյս ունի, թէ մեջլիսը կը գումարվի և Պարսկաստանը կը սկսէ առաջադիմել, ինչպէս սահմանադրական երկիր: Ինչ վերաբերում է ռուսական զօրքերին, թէև ռուսաց կառավարութիւնը տրամադրված չէ յետ կանչել նրանց, սակայն նրա կարծիքով Ռուսաստանը կաշխատէ պակասեցնել զօրքերի թիւը, հէնց որ երկրի դրութիւնը Պարսկաստանում այդ հնարաւոր կը դարձնէ: Ռուսներին պէտք է ժամանակ տրվի, որպէսզի նրանք կարողանան համոզվել, որ Պարսկաստանի նոր կառավարութիւնը յիրաւի ընդունակ է պաշտպանել կարգուկանոնը:

—

Վիէննա.—«Կոր. Բիւրօ» հաղորդում է. «Նէյէս-Վիներ-Տագեբլատում» տպված յօդուածի մէջ մատնանշված է, թէ բարձր քաղաքական շրջանները միաբերան ընդունում են Ֆրանց-Յովսէփ կայսրի նամակի բացառիկ արժէքը. վիճելի հարցերի լուծման ժամանակ նա կանէ հզօր ազդեցութիւն երբև ղեկավար ցուցմունք խաղաղութեան ոգով. Տեղեակ շրջաններում գոհ են Հօհենլօէի միսիայի հետևանքներից. Աւստրո-Ունգարիայի և Ռուսաստանի միասին հանդէս գալը ապահով է. Պետերբուրգում և Վիէննայում վաւերացված խաղաղասիրական տենդէնցների միանմանութիւնը Վիէննայում հանդիպում է ամենաընդարձակ ընդունելութեան: Այդպիսով հիմնաւորվում է այն յոյսը, թէ մեծ պետութիւնները համերաշխ կը մնան ինչպէս իրանց տենդէնցների մէջ, այնպէս և այդ տենդէնցների իրական արտայայտութեան մէջ, որոնք սոսկ խաղաղութիւնը պահելուն են հետամուտ:

Դիպլոմատիական շրջաններում կարծում են, որ Աւստրո-Ունգարիայի և Ռուսաստանի միասին հանդէս գալը «Նէյէս-Վիներ-Տագեբլատը» հասկանում է այն մտքով, որ գուցէ մօտիկ ապագայում երկու մեծ պետութիւնները միաժամանակ միջոցներ ձեռք կառնեն սահմանափակելու սպառազինումը այն տեղերում, ուր այդպիսիները կապվում են բալկանեան դէպքերի հետ:

—

Հօդէյդա.—Իմամ Եահիան դուրս քշեց Սաիդ-Իդրիսին իր դիրքերից և գերեց մի քանի հարիւր մարդու:

—

Սանաա (Արաբիա).—Կատաղի արաբները սպանեցին փոխ-նահանգապետին, վիրաւորեցին մի քանի պաշտօնեաների: Ապստամբութեանը պատճառ դարձաւ անգլիական Ադէնի սահմանին կից մաքսային կայարաններ հիմնելը.

—

Լոնդոն.—Րէյտէրը տեղեկացաւ, որ դեսպանների խորհրդակցութիւնը քննեց թիւրքական առաջարկութիւնը մեծ պետութիւնների միջամտութեան մասին. Պ. Հ. Գ. Թղթակցի տեղեկութիւնների համաձայն՝ ի պատասխանի թիւրքական առաջարկութեան մեծ պետութիւնները պնդել են, որպէսզի Բ. Դուռը ընդունէ Քեամիլ-փաշայի յանձնված մեծ պետութիւնների նօտայի բոլոր պահանջները.

—

Վիէննա.—Սահմաններ որոշելու համար Ալբանիա մասնաժողով ուղարկելու հարցի առիթով լրագիրներին տեղեակ աղբիւրից հաղորդում են՝ որ դեսպանների խորհրդակցութեանը պաշտօնապէս այդպիսի առաջարկութիւն չէ ներկայացված.

—

Բուխարէստ.—Սօֆիայում ռումինբուլղարական բանակցութիւնները վերսկսելը տաք մեկնութիւնների առիթ տուեց ռումինական մամուլի մէջ: Մամուլը ցանկանում է հարցի շուտափոյթ լուծումն, որի յապաղումը բարձրացնում է տրամադրութիւնը երկրում:

Դեսպան Շերէկօն երկու ժամով ունկնդրութեան ընդունվեց թագաւորից.

—

Վիէննա.—Զինւորական հարցերի լաւատեղեակ «Զէյտը» յայտնում է, որ զինւորական ձեռնարկութիւնների պատճառով եղած ծախքերն արդէն 100 միլիօն կրօնի [illegible] [illegible] շարունակութեան դէպքում այդ ծախքերը կը հասնեն միլիարդի:

Այսօր Բերխտօլդի նախագահութեամբ նիստ կայացրին մինիստրները և քննեցին երկրի տնտեսական ու քաղաքական հարցերը.

—

Մէկսիկա.—Մի քանի օր տևող փողոցային կռիւներից յետոյ պրէզիդենտը հրաժարական տուեց:

—

Մեկսիկա.—Նորագոյն տեղեկութիւնների համաձայն՝ Մադէրօն հրաժարական չէ տուել, այլ յայտնել է սենատին, թէ պատրաստ է աւելի շուտ մեռնել, քան հրաժարվել իր լիազօրութիւններից: Ի պատասխան սենատի առաջարկութեանը՝ վերջ դնելու պատերազմական գործողութիւններին՝ Դիասը յայտնել է, թէ կը կատարէ այդ միմիայն Մադէրօյի հրաժարականից յետոյ:

—

Վաշինգտոն.—Պաշտօնապէս հաղորդվում է, որ Միացեալ Պետութիւնները մտադիր չեն փոխել իրանց քաղաքականութիւնը Մէկսիկայի վերաբերութեամբ:

—

Տօկիօ.—«Տաօ դօ Բունկայի» ասիական ընկերութեան խնճոյքում Սունեատսէնը ասաց, որ չինական յեղափոխութիւնը աջողութեամբ վերջացաւ շնորհիւ Եապօնիայի. չինացիք և եապօնացիք կը պաշտպանեն Եւրոպայից և Ամերիկայից Հեռաւոր Արևելքը, որ պէտք է մնայ ասիական ժողովուրդներին:

—

Կաշգար.—Սինցզեանի նահանգի նոր կառավարիչ Պիտականը զօրքը վերակազմում է եւրոպական եղանակով: Մեծ ծախքերի պատճառով նա առաջարկեց տեղական վաճառականներին մասնակցել զինւորական կարիքների համար բաց թողնված ներքին փոխառութեանը:

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՏԱԳՆԱՊԸ

ՎԵՐՍԿՍՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

2 և 3 փետրվարի

Սօֆիա.—Ադրիանուպօլսի ամրակուռ ծութիւնից հրձիգվեցին մի քանի թաղամասեր: Թիւրքաց մի զօրամաս փախաւ բուլղարական բանակը.

Շարքեօյում թիւրքերը նորից անաջող փորձ արին դուրս գալու դիրքերից. Նրանք կռուի դաշտում թողին 1000 դիակ. Թիւրք գերիները պատմում են, որ ափ իջած զօրքը եկաւ Կ. Պոլսից շոգենաւերով։ Շատ զինւոր մինչև նաւ նստելը փախան։

—

Սօֆիա.—Բոլգարական գործակալութիւնը հաղորդելով տեղեկութիւններ Կում բուրգասում և այլ տեղերում թիւրք զինւորների գործադրած բռնութիւնների մասին՝ պնդում է այդ տեղեկութիւնների ճշգութեան վրա, որոնք ստացվել են գլխաւոր բանակից։

Թիւրքաց «Ասառը-Թէվֆիկ» զրահանաւը, որի պաշտպանութեան տակ թիւրքերը փորձեցին զօրք իջեցնել Պօդիմում, Սև ծովի ափին ընդհարվեց բոլգարական մի ականի և խրվեց աւազի մէջ։ Փետրվարի 1-ին մի քանի փոքր ռազմանաւեր բոլորովին ջարդ ու փշուր արին զրահանաւը ջրասուզելով նրան։ Բոլգարական արտիլերիան ջրասոյզ արեց նաև մի ուրիշ թիւրքական շոգենաւ։

Հիւպատոսներին և այն այլազգիներին, որոնք կը ցանկանան հեռանալ Անդրիանուպոլսից, կը թոյլատրվի մեկնել անյապաղ, երբ կը ներկայացվի այն անձանց ցուցակը, որոնք իրաւունք ունեն մեկնելու իբրև օտարազգիներ։

Կառավարութիւնը սկզբունքով համաձայնեց Անդրիանուպոլսի հիւպատոսների միջնորդութեանը, որպէսզի քաղաքում գտնվող օտարազգիների կեանքը լինի վտանգից դուրս պատերազմական գործողութիւնների ժամանակ։

Գիկան նոր տեսակցութիւն ունեցաւ Սարաֆովի հետ, որ տևեց մէկ ու կէս ժամ։ Ներկայ էր Սօֆիա վերադարձած Դանէվը։

—

Բէլգրադ.—Սերբիական «Պրէս Բիւրօն» յայտնում է, որ սերբիական զօրքեր առաքելու տեղեկութիւնները դէպի բոլգարական և յունական պատերազմական դաշտերը, առանձնապէս Ադրիանուպոլիս, Չաթալջա և Եանինա, անհիմն են. իսկութիւնը այն է, որ Բոլգարիա է ուղարկված միայն մի պաշարողական հեծելագունդ անհրաժեշտ թւով թնդանօթներով։ Սուտ են նաև, թէ սերբերից նուաճված տեղերում ալբանները ապստամբվել են և թէ իբր սերբերը խստութիւններ են գործ դնում։ Յիշեալ բոլոր սուտ լուրերը բղխում են Վիէննայից։

Եկաւ գեներալ Պուտնիկը։ Նրա գա[illegible] Սերբիայի [illegible] հասցնելու հարցի հետ։

—

Կ. Պոլիս.—Պաշտօնապէս հաղորդվում է, որ յունվարի 22-ին չերնոգորական 1600 հոգուց բաղկացած զօրաբանակը ամբակոծեց Տարաբօշը և Բարդանիօլին, բայց ցիր ու ցան եղաւ և կորցրեց 3000 սպանված ու վիրաւոր, թողնելով ռազմադաշտում 6 թնդանօթ ու շատ ռազմամթերք։

Կէս օրից Գալիպօլիի մօտ տեղի է ունենում մեծ ճակատամարտ։ Բոլգարական աւանգարդը առաջացել է 8 կիլօմետր։

Ֆինանսների մինիստրութեան դիւանապետ Րէշիդ-Քէմալը իբրև երկրորդ պատուիրակ մեկնում է Լօնդօն։

—

Կ. Պոլիս.—Զինւորական մինիստրութիւնը յայտնում է, որ բոլգարական զօրքերը յետ են մղված 6 կիլօմետր Չաթալջայի գծից մեծ կորուստներով։

Սուլթանի հրամանով 6 օֆիցէր պաշտօնազրկվեցին քաղաքականութեամբ զբաղվելու համար։

Չաթալջայում գերվել է Տըրնովի պրօֆեսոր լէյտենանտ Բադօսլավօվը։

—

Բուխարեստ.—Կ. Պոլսից հեռագրում են, որ կառավարութիւնը շարունակում է լռութիւն պահպանել Գալիպօլիի մօտ տեղի ունեցած գործողութիւնների մասին, ուր դրութիւնը կրիտիքական է Ֆախրի-փաշայի պարտութեան պատճառով, որին փոխարինել է ծովային նախկին մինիստր Խուրշիդ-փաշան։ Կալիկրատիա եկած փախստականները պատմում են, որ թիւրքերը քարուքանդ են արել Եկանօմիս, Եկաստատէրօ և Կէլուս գիւղերը։ Յոյն ազգաբնակութիւնը պատրիարքարանից խնդրում է շոգենաւ ուղարկել Միրիաֆիտոյի, Շարքեօյի և Սիլիվրիայի ափերը՝ ազգաբնակութիւնը ազատելու համար։ Կառավարութիւնը դեռ համաձայնութիւն չէ տուել։ Քիւրդ ձիաւորները Միդիայի մօտ անհաջողութեան հանդիպելով վերադարձան իրանց զօրանոցները Կ. Պոլսի ասիական ափը, ուր կողոպտում ու սպանում են քրիստոնեաներին։ Ֆրանսիական ծովակալը գումարեց օտարազգի նաւապետներին անհրաժեշտ միջոցներ ձեռք առնելու համար։ Իփէկի նախկին նահանգապետ, երիտասարդ թիւրք Ջաֆէր-Տայեարը մեկնում է Վիէննայի վրայով Ալբանիա՝ ապստամբութիւն կազմակերպելու ընդդէմ սերբերի։

Գալիպօլիի մօտ կրած պարտութեան ժամանակ Էնվէր-բէյը վիրաւորվեց, բայց նրան կարողացան ազատել նաւով, որտեղից փոխադրեցին «Թուրգութ-բէյ» ռազմանաւը։

—

Բեռլին.—Հաւաստի աղբիւրից յայտնում են, որ Բոլգարիան մեծ պետու[illegible] րեայթին աւելի է թեքված բաւարարութիւն տալու այն ցանկութեան, որպէսզի միջոցներ ձեռք առնվեն Ադրիանուպոլսում գտնվող այլազգիների ապահով դրութեան համար։

—

Բէլգրադ.—Նիշի ամբողջ արտիլերիական զօրքը ուղարկվեց Ադրիանուպոլիս։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

—

Սղերդի առաջն. տեղապահ Գէորգ վ. Նալպանտեանը յունվարի 12-ին հետևեալ հեռագիրն է ուղղել Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին.

«Քաղաքիս մէջ զինուած իսլամներու սպառնալիքէն վախնալով, մեր ժողովուրդին խանութները երէկուընէ ի վեր փակ են»։

—

Հաջընի հայոց աղջկանց ուսումնարանը, արհեստանոցը, ինչպէս և քաղաքի երևելիներից Թերզեանի մի ընդարձակ տունը վերջերս հրդեհին ճարակ են դարձել։ Ստացված տեղեկութիւնների համաձայն, ոստիկանութիւնն է եղել հրդեհողն այդ շինութիւնները։ Թիւրք կառավարութիւնը ոստիկանութեան այդ քայլը արդարացնում է նրանով, որ աղջկանց ուսումնարանում ապաստանած են եղել զինւորագրութիւնից փախած հայեր։

Բանը նրանումն է, որ Քեամիլ-փաշայի կաբինէտն իր անկումից մի քանի օր առաջ զինւորագրութիւնից փախուստ տուած այդ հայերին—զէյթունցիներ ու հաջընցիներ—ինչպէս և Ադանայի կոտորածին մասնակցած մի քանի թիւրքերի ներումն էր շնորհել։ Հայ փախստականները, տեղեկանալով այդ մասին, դուրս էին եկել իրանց թաքստոցներից, և հիմա՝ նոր պաշտօնի գլուխ անցած իթթիհադական կաբինէտը հայերի վերաբերմամբ չեղեալ է համարում այդ ներումը և սկսում հետապնդել նրանց։ Հայ փախստականներն էլ, ապաստանելով Հաջընի աղջկանց ուսումնարանում, սկսում են ընդդիմութիւն ցոյց տալ։ Տեղական կառավարութիւնը, որպէս զի կարողանայ փախստականներին ձեռք անց կացնել, հրդեհում է շինութիւնը, որից և այրվում են ոչ միայն այդ ուսումնարանը, այլ և, ինչպէս ասացինք, տեղական հայերի արհեստանոցը և Թերզեանի մեծ շինութիւնը։

Կ. Պոլսի հայոց պատրիարքը յունվարի 24 ին այցելել է Բ. Դուռ և ներքին գործերի մինիստրի ուշադրութիւնն է հրաւիրել Թիւրքահայաստանի զանազան տեղերից հասնող անմխիթար տեղեկութիւնների վրա։

ՄԵՐՁԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ԴԷՊՔԵՐԸ

(ԼՐԱԲԵՐԻ ՄԸ ՑՈՒՑԱՏԵՏՐԸ)

(Սեփ. Թղթակցից)

—

Հայկական խնդիր

Կ. Պոլիս, 24 յունուար

Արդէն ծանօթ է, թէ նախորդ դահլիճը հայոց աչքը շլացնելու և անոնց ակնկալութիւնները Եւրոպայէն դարձնել Թիւրք ապիկար վարչութեան դարձնելու համար վեց պետութեանց համար բարենորոգմանց ծրագիր մը կազմելու ձեռնարկած էր։

Այդ դահլիճը տապալելէն երկու օր յետոյ նոր դահլիճին անդամներէն երկրագործութեան և առևտուրի մինիստր Ջէլալ-բէյ, որ երբեմն ներքին գործոց ալ մինիստր եղած է և Զմիւռնիայի ու Կարնոյ կուսակալ, լրագրողի մը հետ ունեցած մէկ տեսակցութեան մէջ՝ իթթիհադական թեզը պաշտպանած էր, յայտարարելով թէ երկիրը կը կարօտի բարենորոգմանց, սակայն այդ բարենորոգումները պէտք է ըլլան միօրինակ և ոչ թէ երկրին ամեն մէկ մասերուն համար զատ-զատ։

Այս յայտարարութիւնները իրապէս համապատասխան էին Իթթիհադի ծրագրին, և զարմանալի չէին մեզի համար. գիտէինք նաև, թէ Թիւրքիա՝ միշտ այսպէս դահլիճներու փոփոխութեան ենթակայ՝ երբեք չէր կրնար իրական և տևական բարենորոգումներ գործադրել, զի մէկուն շինածը միւսը պիտի աւրէր։

Նախորդ դահլիճը ապակեդրոնացման հիման վրայ կազմած էր ծրագիրը, նորը կուգար մերժել այդ հիմը և կեդրոնացման հիման վրայ նոր մը մշակելու խօսքեր կընէր։

Այս խօսքերուն ալ հաւատացող չկար։

Սակայն հազիւ թէ դահլիճը պաշտօնի անցած, անմիջապէս Սուրիոյ և Հայաստանի բարենորոգմանց խնդիրը ձեռք առաւ և ուզեց գործը շարունակել ճիշդ այն տեղէն, ուր թողած էր իր նախորդը։

Ապակեդրոնացման դէմ իր ունեցած ատելութիւնը մոռցած ըլլալ կը թուի Իթթիհադը և այդ ուղղութեամբ կազմուած ծրագիրները իւրացնելու իբր թէ որոշում տուած է։

Ներքին գործոց մինիստրին նախագահութեան տակ կազմուած է յանձնաժողով մը, որուն կանդամակցին նախկին բազմաթիւ կուսակալներ և գաւառներու վիճակին ծանօթ պաշտօնատարներ։

Այս հապճեպ, արագ և շուտափոյթ, մինչ նոյն ատեն՝ իթթիհադական ծրագրին հակառակ ոգւով մը գրուած աշխատութիւնները պէտք չէ որ վրիպին մեր աչքերէն և պէտք չէ որ սոնք մեկնենք Թիւրքական բարեացակամութեան մը նշանները, այլ արտաքին ճնշման արդիւնքներ։ Նախորդ դահլիճը շատ լաւ ըմբռնած էր սպառնացող վտանգը և եւրոպական միջամտութեան մը հաւանականութիւնները Սուրիոյ և Հայաստանի բարենորոգմանց համար և այդ պատճառաւ ձեռնարկած էր մշակելու ծրագիրներ, թէ Եւրոպան և թէ արաբներն ու հայերը միանգամայն խաբելու մտադրութեամբ։

Իթթիհադը՝ նախորդ դահլիճը վարկաբեկելու համար գործածած զէնքերէն մէկ քանին ալ այս բարենորոգմանց խնդիրներուն անոր կողմէ արծարծուիլն էր։ Ամեն կողմ կը տարածայնէին, թէ նախկին դահլիճը ինքնօրինութեան, ապակեդրոնացման դրութեամբ անջատելով Հայաստանը և Արաբիան, Թիւրքիոյ կազմալուծումը կը պատրաստէ և կը դաւաճանէ երկրին շահերուն դէմ։

Հիմա արդեօք ինչո՞ւ նոյնը կընեն իրենք։ Ասիկա շատ նշանակելի իրողութիւն մըն է, որ պէտք չէ անուշադիր թողուլ։

Նոր դահլիճն ալ կերևայ թէ համոզուած է, որ եւրոպական միջամտութիւնը անտեղիտալի է և անխուսափելի, և ինչպէս որ Եդիրնէի և Կղզիներու խնդրին մէջ պարտաւորուեցաւ զիջանիլ, նոյնպէս նաև այս խնդիրներուն մէջ տեղի տալը խոհեմութիւն կը համարէ և կուզէ կանխել Եւրոպան, ճիշդ այնպէս՝ ինչպէս իր նախորդը ուզեց։

Այս իրողութիւնը քաղաքական ներքին իրերադարձութեանց մէկ ստոյգ և վաւերական արդիւնքին արտացոլացումն է, որ պէտք է նկատի առնեն հայկական խնդրոյն համար բոլոր աշխատողները։

Հայորդի

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ՕՐԷՆՔ

Սևան, 30 յունվարի

Մասնաւոր կերպով ստացվեց մեզանում նոր օրէնքի տպած բնագիրը, որը բարձրագոյն հաստատութիւն ստացել է անցեալ տարվայ դեկտեմբերի 20-ին։

Նոր օրէնքի զօրութեամբ՝ Անդրկովկասի հինգ նահանգների, այն է՝ Թիֆլիսի, Քութայիսի, Բագուի, Գանձակի և Երևանի բոլոր կալուածատիրական գիւղերը իրանց հողերի հետ միասին անխտիր անցնում են իւրաքանչիւր գիւղի ժողովրդի և դառնում նրանց մշտական սեփականութիւն։ Ներկայ 1913 թւի յունվարի 1-ից նոր օրէնքը մտնում է գործադրութեան մէջ։ Բոլոր հողերը ըստ որակի գնահատված են և որոշված իւրաքանչիւր հողի արժէքը, այգիներին, վարելահողերին և խոտատեղերին առանձին առանձին։ Այդ հողերի գնահատված ընդհանուր արժէքը հասնում է մօտաւորապէս 24 միլիոնի, որպիսի գումարը կալուածատէրերը ստանալու են գանձարանից, իւրաքանչիւր կալուածատէր առանձին։ Վերոյիշեալ գումարից 17 միլիօն հասնում է Թիֆլիսի և Քութայիսի նահանգներին, [illegible] երեք՝ Երևանի, Գանձակի և Բագուի նահանգներին։

Նոր օրէնքը տարածվում է նաև ինչպէս ուղղափառ եկեղեցուն, նոյնպէս և լուսաւորչական եկեղեցուն պատկանող հողերի վրա։ Էջմիածնապատկան հինգ գիւղերը՝ Վաղարշապատ, Օշական, Եղուարդ, Մուղնի և Մաստարա՝ նոյնպէս ենթարկվում են նոր օրէնքին մի քանի առանձին պայմաններով։ Այդ հինգ գիւղերի արժէքն առանձին նշանակված է 210,000 ր.։ Էջմիածինը պէտք է ստանայ այդ գումարը պետական գանձարանից տասն տարվայ ընթացքում, իւրաքանչիւր տարի 21,000 ր., սկսած ներկայ 1913 թւից։

Իսկ միւս կալուածատէրերն ստանալու են գանձարանից իւրաքանչիւր ծխատէրի թւով 2 ր. 50 կ. տարեկան և ստացվելիք գումարին $4^1/_2\%$։ Այս վճարը գանձարանի կողմից կը շարունակվի տարիների ընթացքում, մինչև որ կը լրանայ ամբողջ հասանելի գումարը։

Հաշտարար միջնորդների ձեռքով կազմըվելիք առանձին առանձին արձանագրութեամբ գիւղացիք կը պարտաւորվեն այդ պարտքը վճարել գանձարանին, ոմանք 56, ոմանք 41 և ոմանք 28 տարիների ընթացքում։ Այդ երեք տեսակ ժամանակամիջոցի ընտրութիւնը թողնված է գիւղացոց կամքին։ 56 տարին ընտրողները պէտք է ընդհանուր պարտքի իւրաքանչիւր ռուբլուց իւրաքանչիւր տարի $4^1/_2$ կոպէկ վճարեն. 41 տարում 5, իսկ 28 տարում $5^1/_2$ կոպէկ։

Այն գիւղերը, որ կը կամենան միանուագ ամբողջ պարտքը կամ նրա մի մասը հանգցնել, նշանակված տոկոսը վճարված գումարի համեմատ այլ ևս չեն վճարի։

Ս. Ե. Փ.

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Մի ընտրութեան առիթով

Գանձակ, 28 յունվարի

Առաջիկայ կիրակի, փետր. 3-ին, ս. Յովհաննէս եկեղեցու ծխ. դպրոցում հրաւիրվում են յիշեալ եկեղեցու ծխ.-ները ընտրելու նոյն դպրոցի համար հոգաբարձուներ։ Ընտրութեան լրջութիւնն աչքի առաջ ունենալով, ցանկալի էր, որ այդ եկեղեցու ծխականները գնային կատարելու իրանց ծխական պարտականութիւնները։

Գանձակեցիներից շատերին քաջ յայտնի է, որ վերոյիշեալ դպրոցը և եկեղեցին վերջին տարիներում կրեցին բարոյական ծանր հարուածներ։

Մեր այդ ուսումնարանը, ցաւելով պիտի ասել, վերջին շրջանում կորոտ է եղել աւելի բարձր տնտեսական, բարոյական և կրթական բարգաւաճման աստիճաններից։ Ուստի ցանկալի էր, որ մեր այդ եկեղեցու ծխականները փետրվարի 3-ի ընտրութեան միջոցին ամենայն գիտակցութեամբ և վսեմ պարտականութիւնների կատարման զգացմունքով մօտենային ընտրելիների քուէտուփերին, որովհետև խելացի և արդար ընտրութիւններ անելուց է կախված մեր գործերի յետագայ լաւ կամ վատ ընթացքը, մի խօսքով՝ մեր համայնական հաստատութիւնների ու գործերի նախանձելի վիճակը։

Միական

—

Ալ. Զալթուկեանի մահը

Կարս, 27 յունվարի

Ամսիս 27-ին հեռագիրը գուժեց, որ մեր քաղաքացի յայտնի հարուստ Ալ. Զալթուկեանը Մոսկվայում կնքեց իր մահկանացուն։

Կառավարութիւնը իսկոյն կնքեց նրա մագազինը և գործակատարներին արձակեց։

Հանգուցեալը, ինչպէս հաւատացնում են, տարեկան առ նուազը, թէ մագազինից, թէ անշարժ կալուածներից և թէ բանկերում տրված փողի տոկոսներից, 30,000 ր. զուտ եկամուտ ունէր և այժմ կէս միլիոն նաղդ փող կունենայ։

Իր կենդանութեան ժամանակ աչքի ընկնող բարեգործութիւն չէ արել, այլ մանր մունր ողորմութիւններ։ Հանգուցեալը 20 հազար ր. նուիրել է եկեղեցաշինութեան և 5000 ր. եկեղեցուն և խնդրել է, որ իրան թաղեն նոր եկեղեցու գաւթում։ Նորին Վեհափառութիւնը արդէն թոյլատրել է։

Այս բոլորից յետոյ հասարակութիւնը դարձեալ սպասում է հանգուցեալի կտակին։ Հանգուցեալը ոչ մի ժառանգ չունի, այլ ամուսնացած երեք քոյր ունի, որոնք վաղուց ստացած են եղել իրանց հայրական բաժինները։

Անցած ամառ չանտաժիստները, Սէյլանեանցին սպանելուց յետոյ, շրջապատեցին այս հանգուցեալին և գրում էին սպառնական նամակներ։ Այս պատճառով Կարսից փախաւ Մոսկվա և այնտեղ մտատանջութեան մէջ կնքեց իր բազմաչարչար և աշխարհից ոչ մի բաւականութիւն չը ստացած կեանքը։

Սարիբէգ Տէր Մելքիսեդեկեան

—

Ընթացիկ կեանքը Լագոդեխում

Լագոդեխ, 28 յունվարի

Ամսիս 24-ի երեկոյեան ժամը 8 ին տեղիս 6-րդ Կուբանեան պլաստունների գնդի զինւորական բժիշկ՝ Գ. Ն. Ցիցիկեանը նոյն գնդի գարնիզօն-գնդապետի հրամանով զինւորականների ժողովարանում օֆիցէրների համար դասախօսեց «խօլերայի ու նրա հետևանքների մասին»։ Դասախօսութիւնը տևեց $1^1/_2$ ժամ, շատ լաւ տպաւորութիւն թողեց ունկնդիրների վրա, ու վերջը իրանց անկեղծ շնորհակալութիւնները յայտնեցին երիտասարդ բժշկին։

Ցանկալի կը լինէր, որ բժիշկը այսպիսի դասախօսութիւններ անէր և տեղիս հասարակութեան համար, մանաւանդ որ հասարակութեան կէսից աւելին պարապում է գինեգործութեամբ։

Աւանից 10 վերստ հեռաւորութեան վրա գտնվում է լէզգիների Ղօրախչօ կոչված գիւղը. այդ գիւղի բնակչութիւնը, որ մօտ 2000 տուն է համարվում, ներկայումս իր երեխաներից բաւական զոհեր է տալիս ծաղիկ հիւանդութեանը։ Իսկ աւանիս կից Շրօմա կոչված վրաց գիւղում տարածված է [illegible] հիւանդութիւնը, որ նոյնպէս զոհեր է տանում։

Ձմեռը մեզանում գարնանային էր, մինչև ամսիս 12-ը համարեա թէ եղանակների տաքութեան պատճառով սառակցել էին դաշտային մրգերը. ներկայումս եղանակը կատարեալ ձմերային է. առատ ձիւն եկաւ. եթէ չը լինէր ձիւնը, երկրագործը սաստիկ յուսահատված էր։

Փիրուզ

—

Ընթացիկ կեանք

Քութայիս, 30 յունվարի

Տէրրօրական ակտերի մի շրջան է սկըսված տեղիս հարուստ հրէաների դէմ։ Այդ եղեռնագործութեան զոհ գնաց նախ միլիոնատէր հրէայ Էլիգուլիշվիլին, ապա հարուստ հրէայ Ցիցիաշվիլին, որին ուզում էին կարքով փախցնել և որի ժամանակ զոհվեցին պրիստաւ Մարգարեանց և ստրաժնիկ Ստավրակով, ապա անցեալ օրը երեկոյեան երեք ռումբ նետեցին միլիոնատէր հրէայ Միժինաշվիլիի բնակարանը, որը մերժել էր տալ տէրրօրիստների պահանջած 20,000 ռուբլին։

Հրէաները սարսափի մէջ են. մի քանի հարուստներ շրջում են քաղաքում ստրաժնիկների ուղեկցութեամբ, որ ճնշող տպաւորութիւն է թողնում հասարակութեան վրա։ Կառավարութեան ձեռնարկած միջոցները մնում են առանց հետևանքի, իսկ երկիւղը շարունակ թագաւորում է հրէաների մէջ։

Շատերը ասում են, որ դա Պարսկաստանից վերադարձած դէմօկրատների գործ է, բայց մեծամասնութիւնն այն կարծիքի է, որ այդտեղ թաքնված է մի յայտնի շօվինիստական նպատակ։

Յայտնի է, որ տեղիս առևտուրը կենտրոնացած է հրէաների ձեռքում, հետևաբար և կապիտալը խտացած է նրանց մօտ։ Նրանք ամեն շահագործութիւնների կատարեալ տէրն են, իսկ վերջին ժամանակներս մեծ առաջադիմութիւն են արել անշարժ կայքեր ձեռք բերելում։ Կառուցանում են հոյակապ և շքեղ շինութիւններ ճարտարապետութեան վերջին թելադրանքի համաձայն և մրցում են աջողութեամբ ամեն գործում ազգաբնակութեան միւս խաւերի հետ։

Ի հարկէ, այդ բոլորը չէր կարող հանգստութիւն տալ տեղիս որոշ դէմքերին, և նոքա հրէաներին իբր թէ սանձահարելու համար նրանք դիմում են մի այդպիսի խելառ ու դժոխային միջոցի։

Այս բոլորը իբրև փաստ չը պէտք է ընդունել, այլ ենթադրութիւններ են, բայց դասաւորված հանգամանքները շատերի մէջ այդպիսի համոզմունք են ծնեցնում։

Քութայիսը անտեսապէս դարձեալ նոր առաջադիմութիւններ է անում իր բնական արտադրութիւնների մէջ։ Մի երկու տարի առաջ այստեղ սկսեցին ցանել մի տեսակ լօբի, որին անուանում են եւրոպական լօբի. տեսքով նա սուրճի ձև ունի, և որովհետև շատ իւղալի է, դրանով կերակրում էին անասուններին, գլխաւորապէս կովերին, սակայն վերջերս սկսել են սերմել մեծ տարածութիւններ և շատ առատ հունձ են վերցնում։ Գիւղացիք պատմում են, որ մէկին տալիս է հարիւր, և իրանք անուանում են դրան «քաջքի լօբի»։ Այժմ արդէն տեղիս վաճառականները առնում են և վագօններով արտադրում Ռուսաստան։ Պարզ յայտնի չէ, թէ ինչի՛ համար են գոր[illegible] Ռուսաստանում, բայց անպայման դրանից ձէթ են քաշում։ Դրա օգուտը կայանում է և նրանում, որ ցանելու համար առանձին տեղ չէ պահանջում, այլ ցանում են դրան սիմինդրի տակերի ազատ մնացած տեղերում, ինքը զարգանում է ցածր ճուճուի թփերով և բոլորովին չէ խանգարում սիմինդրի ազատ աճմանը։ Պէտք է համոզված լինել, որ այդ բերքը գիւղական տնտեսութեան համար մի նոր դարագլուխ կը կազմէ։

Ս. Նազարեանց

ՆԱՄԱԿՆԵՐ ՆԱՒԹԱՇԽԱՐՀԻՑ

—

Մեր ռեցենզենտները

Բագու, 29 յունվարի

Անցեալ օրը հայ դրամատիկ խումբը խաղաց առաջին անգամ մեզ մօտ Ֆիլիպպիի «Մարդկութեան բարերարներ» կամ «Կարմիր բժիշկ» դրաման։

Ես չեմ ուզում այստեղ քննադատել այդ պիէսան կամ խմբի խաղը. ոչ, այլ ուզում եմ հասարակութեան ուշադրութիւնը դարձնել մի տարօրինակ երևոյթի վրա, որը թէ ծիծաղելի և թէ տխրելի է։

Բագւում կան երկու ռուսերէն թերթեր—«Баку» և «Каспій»—որոնք հայկական ներկայացումների մասին ռեցենզիաներ են տալիս։

Համարեա թէ միշտ էլ երկու թերթերի ռեցենզիաները որոշ տեղեր տարբերվում են միմեանցից, և այդ շատ հասկանալի է, որովհետև ռեցենզենտներն էլ իբրև անհատներ ունեն իրանց կարծիքները և աշխարհահայեացքները այս կամ այն պիէսի մասին կամ այս-ինչ կամ այն-ինչ դերասանի խաղի մասին։

Բայց և այնպէս մինչև այժմ դեռ ևս չէ եղել այնպիսի մի դէպք, որ երկու թերթերի ռեցենզիաներն էլ մի տարօրինակ կերպով միմեանց հակապատկերը ներկայացնէին ամեն ինչում, սկսած պիէսի քննադատութիւնից և վերջացրած դերասանների խաղով ու ընդհանուր անսամբլով։

Ճիշդ է, դեռ անցեալ շաբաթ այդ երկու թերթերի ռուս ռեցենզենտների հետ էլ մի համանման դէպք էր պատահել, բայց այդ դէպքը գոնէ միայն ներկայացմանն էր վերաբերում և ոչ մի կապ չունէր պիէսի հետ։

Իսկ մեր հայ ռեցենզենտները աւելի հեռու են գնացել և նրանց համար մի ծիծաղելի դրութիւն է ստացվել։

Վերցրէք և կարդացէք յիշեալ ռուսերէն թերթերի այսօրվայ ռեցենզիաները վերոյիշեալ ներկայացման մասին և դուք կը մնաք իսկապէս որ ապուշ դրութեան մէջ, այնքան տարօրինակ են նրանք, այնքան մէկը միւսին հակառակ։

Խօսելով պիէսի մասին՝ նրանցից մէկը գտնում է գեղեցիկ, հայ բեմին նպատակայարմար և ողջունում է նրա ներկայացումը հայ բեմի վրա, իսկ միւսը գտնում է, որ պիէսը ոչ մի արժանիք չունի, անպէտք մի բան է, և մեղադրում է խմբին, որ սա խստապահանջ չէ դէպի իր ռեպերտուարը։

Խաղի մասին նոյն ծայրայեղ հակառակ կարծիքները. մէկը ասում է, որ ընդհանուր անսամբլը լաւ էր, խաղացողներից իւրաքանչիւրը իր տեղն էր, և պիէսը ամենաաջող ներկայացումներից մէկը կարելի է համարել։ Իսկ միւսը՝ թէ անսամբլ չը կար, խաղացողները իրանց տեղերում չէին և ներկայացումը չափազանց անաջող էր....

Ոչ մի խօսք, ոչ մի բառ այդ երկու ռեցենզիաներից միմեանց չեն բռնում, այլ շարունակ միմեանց հակասում են։

Ո՞վ է սխալ և ո՞վ ուղիղ երկու ռեցենզենտներից՝ Ալլահը գիտէ, և մեզ չի էլ հետաքրքրում այդ. բայց մեզ հետաքրքրում է այն հարցը, թէ ի՛նչ պէտք է զգայ մի ընթերցող, որը դժբաղդութիւն է ունեցել այդ երկու ռեցենզիաներն էլ կարդալու։

Ինչ եզրակացութիւն պէտք է դուրս բերէ այն մարդը, որ ներկայացում գնալուց յետոյ ձեռքն է վերցնում այդ թերթը, կամենալով իմանալ «հասարակութեան առաջնորդների» կարծիքը այս կամ այն պիէսի, այս կամ այն դերասանի խաղի մասին։

Ու վերջապէս ինչ պէտք է զգայ այն դերասանը, որը ներկայացման հետևեալ օրը ձեռքն է վերցնում այդ երկու թերթերն էլ՝ իմանալու նրանց կարծիքը իր խաղի մասին։

Եւ հէնց այդ է պատճառը, որ մեզ մօտ այժմ քննադատութիւնը ընդհանրապէս այն յարգը չունի, ինչ որ պէտք է ունենայ։

Լուրջ, անկողմնապահ քննադատութիւն գոյութիւն չունի մեզ մօտ, չը կան պատրաստուած, իրանց կոչումը լուրջ հասկացող քննադատներ, որոնք կարողանան քննադատել որևէ գրուածք, պիէսա, այս կամ այն դերասանի խաղը այնպէս, ինչպէս որ նա կայ, առանց որևէ կանխակալ կարծիքի, առանց որևէ հաշւի։

Եւ քանի որ այդ այդպէս է, մենք դեռ շատ անգամներ պէտք է ականատես լինենք մեր կեանքի մէջ այնքան յաճախ կրկնվող երևոյթներին, երբ միևնոյն գրուածքի, միևնոյն պիէսի, միևնոյն դերասանի խաղի մասին քննադատներից մէկը սև է ասում, միւսը սպիտակ։

Այդ մի ցաւալի իրականութիւն է, որը դժբաղդաբար տասնեակ տարիներից ի վեր գոյութիւն ունի մեր մէջ։

Վաղարշակ Թումանեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Թէ կառավարական և թէ հասարակական պաշտօնական հիմնարկութիւնները ամենայն եռանդով պատրաստութիւններ են տեսնում կատարելապէս շքեղ տօնելու Թիֆլիսում Ռոմանովների Տան 300-ամեայ յօբելեանը։ Կովկասի փոխարքան իր հրատարակած հրահանգի մէջ Կովկասի նահանգապետների ուշադրութիւնն է հրաւիրում նաև այն կէտի վրա, որպէսզի փետրվարի 21-ին ամենուրեք լինեն ժողովրդական զբօսանքներ, ընթերցումներ մոգական պատկերներով, որպէսզի տները զարդարվեն դրօշակներով, գիրլեանդներով ևայլն։ Այդ օրը փողոցներում թոյլ են տրվելու զուռնա, սազանդար, արգան և այլն։

◆ Կիրակի արագ գնացքով Պետերբուրգ մեկնեց Կովկասի փոխարքայի քաղաքացիական մասի օգնական սենատոր Վատացին։

◆ Ներքին գործերի մինիստրութեան նախահաշւով 1913 թւի ընթացքում Թիֆլիսի ոստիկանութեան պահպանման համար յատկացված է 115,200 ռուբլի։

◆ «Ալ. Մանթաշեան և ընկ.» նաւթարդիւնաբերական ընկ. բաժնետէրերի ընդհանուր ժողովում որոշվել է միջնորդել հիմնական դրամագլուխը (ակցիաներով) 11 միլիոնից դարձնել 20 միլիոն։ Բացի դրանից որոշված է իւրաքանչիւր ակցիայի գինը 250 ռուբլուց իջեցնել 100 ռուբլու։ Շուտով ընկերութեան գլխաւոր գրասենեակը Բագուից կը փոխադրվի Պետերբուրգ։

◆ Պետերբուրգում փետրվարի 10-ից կը սկսվի փորձնական գործի մասնագէտների համագումար, որ կազմակերպել է երկրագործութեան դեպարտամենտը։ Յիշեալ համագումարին մասնակցելու համար իբրև Կովկասի ներկայացուցիչ երէկ Թիֆլիսից մեկնեց աւագ-մասնագէտ Ալ. Քալանթար։

◆ Այսօր Արքունական թատրոնում նշանակված է ներկայ օպերային խմբի կանացի ուժերից առաջնակարգի՝ դրամատիկական-սոպրանօ Ալէչկօյի բենեֆիսը։ Իր բենեֆիսի առիթով յարգելի երգչուհին ընտրել է իր ռեպերտուարից ամենաաջող օպերան՝ «Տօսկան»։ Ինչ կասկած, որ երաժշտասէր հասարակութիւնը իր սիրելի դերասանուհու բենեֆիսի օրը կը լցնէ թատրոնը՝ մի անգամ ևս ստանալու գեղարուեստական իսկական հաճոյք։

◆ Վաղը տեղի կունենայ Իտալիայից եկած երգիչ Նանօբօվի առաջին գաստրոլը։ Կը տրվի «Կարմէն» օպերան, որի մէջ Նանօբօվը կը կատարէ Դօն-Խօզէի դերը։

◆ Կիէվում օգոստոս ամսում կայանալու է գրքեր ու լրագիրներ հրատարակողների համառուսական համագումար։ Առաջարկված են կարևոր հարցեր էժանացնելու գրական հրատարակութիւնները, հիմնելու սեփական հեռագրական գործակալութիւն, կանոնաւորելու լրագիրների առաքումը, միացեալ կերպով գնելու թուղթ ու մեքենաներ և այլն։

◆ «Լոյս» ընկերութեան վարչութիւնը որոշել է ի յիշատակ հանգուցեալ բժիշկ Ա. Ղազազեանի պահել նրա անունով իր դպրոցում երկու որբ հայ երեխայ, յայտնել հանգուցեալի ընտանիքին ցաւակցութիւն և վարչական կազմով ներկայ գտնվել թաղման հանդէսին։

◆ Ստացանք հանգուցեալ բժիշկ Աղէքսանդր Ղազազեանի դագաղի վրա պսակ դնելու փոխարէն՝ յանձնելու Հայուհեաց Որբախնամ Ընկերութեան՝ 1) Դչխունի և Սաքօյի Մելքոնեաններից 20 ռ., 2) Եղբ. Չիլինկարեաններից—25 ռուբլի։

◆ Փետրվարի 7-ին Կովկասի Հայ Գիւղատնտեսական և Տնայնագործական Ընկերութեան մէջ նշանակված է Գեղարուեստի Թիֆլիսի Ընկերութեան անդամների ընդհ. ժողով նախագահ ընտրելու և հերթական գործերի համար։

◆ Պետերբուրգից տեղեկացնում են, որ «Դաշնակցութեան» գործի մէջ 37 խարդախութիւն կատարած քննիչ Լըժինին, ինչպէս յայտնի է, սկզբում պաշտպանում էր արդարադատութեան մինիստրութիւնը։ Բայց այժմ նա էլ համոզվեց, որ Լըժինը աննորմալ մարդկանցից է եղել։ Այդ քննիչի մասին համապատասխան յօդուած է գրել Սերգէյ Եաբլօնօվսկին «Р. Сл.»-ի № 26-ում։

◆ Կովկասի փոխարքան թոյլատրել է Կովկասի բեմերի վրա խաղալու Արշալոյս Գրիգորեանի «Ծխական դպրոցի հոգաբարձու» վօդևիլը։ Նիւթը վերցրած է հայկական ծխական դպրոցների կեանքից։

◆ Ամսիս 8-ին, ուրբաթ օրը, հայ դրամատիկական խումբը չորրորդ անգամ կը ներկայացնէ Շանթի «Հին Աստուածներ» յայտնի պիէսը։

◆ Փետրվարի 1-ին, 18 տարեկան ուսանուհի Կատարինէ Դանիլօվան, որ ապրում է Կաթօլիկական փողոց № 19 տանը, իրան կեանքից զրկելու նպատակով խմեց թոյն, բայց շուտով նրան ազատեցին մահից։ Պատճառը առ այժմ յայտնի չէ։

◆ Փետրվարի 1-ին Նիկօլայեվսկայա փողոց № 84 տան դռնապան Իվանը գտաւ մի նորածին երեխայի փողոցում դրված, յետոյ տարան Օլգինսկի ծննդաբերական ապաստարանը։

◆ Ոստիկանութիւնը կալանաւորել է Բօրչալուի գաւառի Հայդար գիւղում Նաւասարդ Մկրտչեանին և սրա հօրը, որոնք յունվարի 23-ին Թիֆլիսում պաշտօնաթող գնդապետ Պետրոս Արղութեան-Երկայնաբազուկից յափշտակել էին 1400 ռուբլի։

◆ Փետրվարի 1-ին Չերքեզօվսկայա փող. № 66 տան նկուղում գտնվեց գետնի մէջ թաղված և քայքայված մի դիակ։ Պարզվեց, որ այդ՝ 24-ամեայ գեղջկուհի Ակսինիա Սարիչեվան է, որ ծառայելիս է եղել երկաթուղային մեքենավար Իօսիֆ Պանցուլայի մօտ։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂ ԱՐ.

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՍԱԼՕՆՈՒՄ

Փետրվարի 1-ին, ուրբաթ, երեկոյեան, Տ. Նազարեանի Գրական-Գեղագիտական Սալօնը գրաւել էր դարձեալ այցելողների մեծ բազմութիւն։

Բանալով ժամը 9-ին երեկոյթը, Տ. Նազարեան յայտնեց, որ խնդրել է Հ. Առաքելեանին հաղորդել իր տպաւորութիւնները հայկական հարցի շուրջը՝ իր բնակութեան ժամանակ Պարիզում։

Հ. Առաքելեան.—Ես գիտեմ, թէ ինչպիսի մեծ անհամբերութեամբ այստեղ գումարվածներդ ակնկալում էք լսել ինձանից մի մխիթարական լուր, բերած Պարիզից, ուր այժմ կենտրոնացած է հայկական հարցի ղեկավարութիւնը։ Սակայն անհնար է ինձ այդ իմաստով որևէ բան հաղորդել ձեզ, նախ՝ որովհետև հայկական հարցը դեռ չէ դրված լուծվելու շաւղի մէջ և միայն նախապատրաստական գործողութիւններ են կատարվել և կատարվում, երկրորդ՝ որովհետև այդ հարցին վերաբերեալ շատ փաստեր և տեղեկութիւններ չը պէտք է առ այժմ հրապարակ հանել։ Ուստի ես կը հաղորդեմ ձեզ մի քանի ընդհանուր տպաւորութիւններ, որ ես ստացայ ուղևորութեանս ժամանակ և մի քանի այնպիսի տեղեկութիւններ, որոնք հրատարակված են եւրոպական մամուլի մէջ, բայց գուցէ ձեզ դեռ անծանօթ են մնացել։

Հայոց պատմութեան մէջ ոչ մի հարց այնքան խորապէս չէ ազդել ամբողջ հայ ազգի, հայ ժողովրդի մտքի, հասկացողութեան, հոգեբանութեան և կուլտուրայի վրա, որքան չարաբաստիկ հայկական հարցը. կարելի է ասել, որ նա ամբողջովին յեղաշրջել է հայ ժողովրդի հոգեբանութիւնը. նա ազդել է խորապէս մեր գրականութեան, մեր բանաստեղծութեան, մեր քաղաքակրթութեան վրա և նոյն իսկ, եթէ կամենաք, նա խափանել է մեր էվօլիւցիօնական կուլտուրան, որովհետև նա արգելք է եղել, նա թոյլ չէ տուել մեզ հայերիս խաղաղ, հանգիստ կերպով մտածել մեր զարգացման մասին և զբաղվել նրանով։ Եւ ի՛նչպէս կարող էր հայ ժողովուրդը մտածել հանգիստ և անդորր մտքով որևէ կուլտուրական, տնտեսական կամ որևէ հանրամարդկային հարցի մասին, երբ 34 տարի ամեն ժամ, ամեն րոպէ լսում էր միայն ողբի, կոծի, լացի, տանջանքի և չարչարանքի աղաղակներ, երբ կոտորվում էին անխնայ նրա լաւագոյն, երիտասարդ տարրերը, երբ նրա բողոքի, դառնացած ամենափոքր աղաղակը լռեցնում էին արեան ճապաղիքների մէջ։ Ամբողջ 30 տարի Թիւրքահայ ժողովուրդը բաղխեց քրիստոնեայ պետութիւնների դուռը, օգնութիւն հայցեց. ամբողջ 30 տարի նա կոչ արեց Եւրոպայի մարդասիրական զգացումներին, բայց օգնութիւն ոչ մի տեղից չը գտաւ։ Վերջապէս 4 տարի առաջ, 1908 թ., նրան թւաց, թէ ծագել է փրկութեան արշալոյսը. նա այդ արշալոյսը տեսաւ երիտասարդ-Թիւրքերի առաջ բերած յեղափոխութեան մէջ, նրանց հռչակած սահմանադրական նոր ռէժիմի մէջ։ Եւ մի րոպէ կարծեց, որ հայկական չարաբաստիկ հարցը լուծվելու է արդէն այդ նոր դէպքով։ Աւաղ, այդ յոյսը ևս խաբուսիկ եղաւ. Ադանայի ահռելի ջարդն եկաւ հաստատելու, որ հայկական հարցը մնում է նոյն դրութեան մէջ, գուցէ և աւելի վատթար, քան առաջ, իսկ յետագայ հարստահարութիւնները, կեղեքումները, բռնութիւնները, աւերածութիւններն այլ ևս ոչ մի կասկած չը թողեցին, որ հայկական հարցը կայ և մնում է անլուծելի։ Եւ ահա երբ ծագեցին բալկանեան բարդութիւնները, ծագեց նորից և հայկական հարցը, և այս անգամ ոչ միայն ինքը Թիւրքահայը խօսեց և պահանջեց, որ իր հարցն ևս նկատողութեան առնվի, այլ խօսեց միահամուռ կերպով և բոլոր միւս երկիրների հայութիւնը։

Ապա զեկուցանողը պատմելով թէ ինչպէս ամեն կողմից դիմումներ եղան ուղերձներով, հանրագրութիւններով Ամենայն Հայոց Կաթողիկոսին, թէ ինչպէս Նորին Վեհափառութիւնը կարգեց Պարիզում մի պատգամաւորութիւն՝ գլխաւորութեամբ Պօղոս-Նուպար փաշայի, որին և յանձնեց միսսիա՝ պաշտպանելու հայկական դատը եւրոպական մեծ պետութիւնների կոնֆերանսի առաջ, երբ այդպիսին կը կայանայ, յայտնելով որ ինքը հրաւէր ստացաւ Պօղոս-Նուպար փաշայից գնալու Պարիզ և աջակցելու իրան—իրողութիւնները, որոնք արդէն ծանօթ են հասարակութեան—կցեց.

«Մեկնելով դէպի Պարիզ, ճանապարհին ես կանգ առայ 2 օր Բեռլինում և տեսնվեցի այդտեղ ձեռնհաս անձանց հետ։ Հասնելով Պարիզ, ուր արդէն վաղուց գտնվում էր Նուպար-փաշան և սկսել էր ծանօթանալ հայկական խնդրի հետ իր բոլոր մանրամասնութիւնների մէջ, հետամուտ էր եղել լսել հայասէր ֆրանսիացիների, զանազան քաղաքագէտների, դիպլօմատների կարծիքը, հայկական զանազան հոսանքների և ուղղութիւնների կարծիքը, ես ներկայացրի նրան մի մանրամասն զեկուցումն այն ամենի մասին, ինչ որ խօսվել և գրվել է Ռուսաստանի հայերի մէջ, այն հանրագրութիւնները, դիմումների հետ, որոնք ուղղվել են Կաթողիկոսին։

«Ի մի յայտարարութիւն վերածելով այդ ամենը՝ մենք եկանք հետևեալ անկասկած և անհերքելի եզրակացութեան, այն է՝ ի սփիւռս աշխարհի տարածված ամբողջ հայ ազգն այսօր այն խորին համոզումն ունի, որ հայկական հարցը կարող է և պէտք է լուծվի միմիայն Ռուսաստանի շնորհիւ և ձեռքով և եթէ նա պէտք է մօտ ապագայում, կամ երբևիցէ լուծվի, նրա լուծողն այս և այն ձևով լինելու է Ռուսաստանը։ Նոյն անխախտ համոզումն է տիրում և Եւրոպայի քաղաքական, դիւանագիտական շրջաններում։ Ֆրանսիական, անգլիական դիպլօմատիայի ներկայացուցիչները, որոնց մասնաւոր կերպով դիմել էր Նուպար-փաշան, յայտնել էին նոյն կարծիքը, այն է՝ թէ հայկական հարցի քննութեան և լուծման նախաձեռնութիւնը պէտք է Ռուսաստանը յանձն առնէ։ Անգլիական մի շատ հեղինակաւոր պետական անձն ասել էր. «Երբ 1878 թ. Ռուսաստանը կամեցաւ լուծել հայոց հարցը և պատրաստ էր նոյն իսկ աւտօնոմ Հայաստան ստեղծել, Անգլիան զօրեղ դիմադրութիւն ցոյց տուեց. այսօր, 34 տարուց յետոյ, եթէ Ռուսաստանը ցոյց տայ նոյն ձգտումը, կամենայ նոյն իսկ աւտօնոմ Հայաստան ստեղծել, Անգլիան դիմադրութիւն ցոյց չի տայ և նոյն իսկ կաջակցէ նրան»։

«Յայտնի է, որ Ռուսաստանը, ոչ միայն ի դէմս իր հասարակական կարծիքի և մամուլի, այլ և ի դէմս իր կառավարիչ շրջանների մեծ համակրութեամբ է վերաբերվում հայկական հարցին։ Ուրեմն պատգամաւորութեան համար պարզ էր, որ եռապետեան համաձայնութիւնը տրամադիր է ձեռք առնելու հայկական հարցի քննութիւնը և լուծումը, միայն թէ ռուսական, թէ ֆրանսիական և թէ անգլիական կառավարութիւնները գտնում են, որ այժմ րոպէն յարմար չէ բարձրացնելու հայկական հարցը. այլ պէտք է սպասել մինչև բալկանեան ճգնաժամի աւարտումը, որից յետոյ միայն հայկական հարց կարող է արծարծվել։ Ինչ վերաբերում է եռապետեան դաշնակցութեան (Աւստրիա, Գերմանիա, Իտալիա), աւստրիական կառավարութեան կողմից կարծիք էր յայտնվել, թէ նոյնպէս վաղաժամ է հարցը դնել, պէտք է սպասել. իտալական կառավարութիւնը, իր համակրութիւնը յայտնելով հանդէպ հայկական դատին, նոյնպէս րոպէն անյարմար էր գտնում, խոստանալով սակայն բարեհաճ վերաբերմունք և աջակցութիւն, երբ հարցը դրվի։ Մնում էր իմանալ ի հարկէ մասնաւոր կերպով, գերմանական կառավարութեան կարծիքը և վերաբերմունքը։ Բեռլինում վերջերս կազմվել է երկու յանձնաժողով հայկական հարցի համար, մէկը տեղական հայերից, միւսը հայասէր գերմանացի գործիչներից և գիտնականներից. արդ, տեղական հայերը մի պատգամաւորութեամբ ներկայացել էին արտաքին գործերի մինիստրութեան և այդտեղ իմացել էին մի հետաքրքրական փաստ։ Գերմանական կառավարութիւնը մինչև վերջին 3—4 տարին շատ անհամակրութեամբ էր վերաբերվում հայերին, որովհետև Փոքր Ասիայի իր գործակալներից ստացված զեկուցումները և տեղեկութիւնները շատ մռայլ գոյներով էին նկարագրում հայերին, իբրև մի վաշխառու, կեղեքիչ, խռովարար, ծոյլ և աշխատութեան անընդունակ ժողովուրդ, տէր չար հակումների։ Սակայն, երբ վերջին տարիները Փոքր-Ասիայի զանազան վայրերում հաստատվեցին գերմանական ազգային բանկի ճիւղեր և կառավարիչներ նշանակվեցին գերմանացիներ, վերջիններս իրանց տեղեկագրերի և զեկուցումների մէջ սկսեցին նկարագրել հայերին բոլորովին հակառակ ձևով. հայ ժողովուրդը մի համեստ, աշխատասէր, երկրագործ, [illegible] և գործունեայ ժողովուրդ է, ընդունակ կուլտուրայի, հայերը մեծապէս նպաստում են գերմանացիներին իրանց տնտեսական, առևտրական ձեռնարկութիւնների մէջ ու անհրաժեշտ տարր են հանդիսանում։ Այսպիսի տրամագծօրէն հակառակ վկայութիւնները և տեղեկագրերը հայ ժողովրդի մասին ստիպեցին գերմանական կառավարութեանը քննել պատճառը, և յայտնվեց, որ նախկին զեկուցումները, որոնց մէջ հայերը մռայլ գոյներով են նկարագրված, բղխում էին բացառապէս հրէաներից, որոնք կամենալով հեռացնել հայերին մրցութիւնից՝ աշխատում էին նրանց ցոյց տալ վատ կողմից։ Շնորհիւ նոր ստացած տեղեկութիւնների, գերմանական կառավարութիւնը այլևս թշնամաբար չէ տրամադրված դէպի հայերը և ընդդիմութիւն ցոյց չի տայ Թիւրքաց Հայաստանում ռէֆորմներ մտցնելու ծրագրին։

«Ծանօթանալով եւրոպական կառավարութիւնների տրամադրութիւնների հետ, իմանալով որ այժմ խորհուրդ չէ տրվում պաշտօնական դիմումն անել և պէտք է սպասել, Պարիզի պատգամաւորութիւնը որոշեց իր ազատ ժամանակը գործ դնել և զբաղվել նիւթերի մշակմամբ և պատրաստել Թիւրքաց Հայաստանի համար անհրաժեշտ և անյետաձգելի համարված ռէֆորմների մի ծրագիր, այն նպատակով, որ երբ պետութիւնները ձեռնարկեն հայկական հարցի քննութեան և պահանջեն պատգամաւորութիւնից յայտնել իր պահանջները կամ ներկայացնել ռէֆորմների ծրագիր, այդպիսին պատրաստ լինի՝ ներկայացնելու համար։ Ահա այդ աշխատութեամբ զբաղվեց ամբողջ ժամանակ պատգամաւորութիւնը և այժմ կազմած ունի թէև ոչ վերջնականապէս, բայց մի ամփոփ և բաւական մշակված ծրագիր»։

Ապա Առաքելեան զեկուցեց, որ ռէֆորմների զանազան ծրագիրները քննելիս մի հարց շարունակ խոր ուսումնասիրութեան և մեծ վիճաբանութիւնների առարկայ էր— հայ ժողովրդի թիւը Թիւրքիայում, որովհետև դրանից է կախված մասամբ և ծրագրի էութիւնը։ Կար մի ծրագիր, մշակված 1901 թ. և ներկայացրված ֆրանսիական կառավարութեան, որի համաձայն ռէֆորմների ներմուծումը և պաշտօնեաների նշանակումը հիմնված է ընտրական սիստեմի վրա. արդ, յայտնի ֆրանսիացի գործիչ Վիկտոր Բէրար ամենամեծ իրաւունքով գտնում է, որ ընտրական սիստեմի վրա ռէֆորմներ մտցնելը Հայաստանում աղէտալի հետևանքներ կունենայ հայերի համար, որովհետև այդ դէպքում ձայների մեծամասնութեամբ կընտրվեն թիւրքերը։ Բէրարի կարծիքով՝ ռէֆորմների ներմուծումը աւելի լաւ է հիմնված լինի եւրոպական աբսօլիւտիզմի, նոյն իսկ միահեծան իշխանութեան, քան ընտրական սիստեմի վրա։

Հանդիսականները շնորհակալութիւն յայտնեցին Հ. Առաքելեանին իր զեկուցման համար։

Այնուհետև զրոյցը ղեկավարելու համար նախագահ ընտրվեց Ա. Քալանթար, որ խնդրեց հարցմունք անել ցանկացողներին տալ իրանց հարցմունքները, որպէս զի զեկուցանողը միանգամից կարողանայ պատասխանել, եթէ միայն նա հնարաւոր կը գտնի տալ պատասխան։

(Կը շարունակվի)

ԳՐԱԿԱՆ ԴԱՏ ՇԱՆԹԻ «ՀԻՆ ԱՍՏՈՒԱԾՆԵՐԻ» ՄԱՍԻՆ

Փետրվարի 3-ին Վրաց Ազնուականների թատրոնում տեղի ունեցաւ գրական դատ՝ Շանթի և իր «Հին Աստուածների» մասին, որ կազմակերպել էր Հայ Գրողների Ընկերութիւնը։ Սա հայ գրականութեան պատմութեան մէջ առաջին գրական դատն է, որի պատւին արժանացաւ Շանթը։ Դատական կարգերի բոլոր ձևերը պահպանված էին. կային դատախազներ (2), պաշտպաններ (2), դատաւորներ (3) և երդուեալ-ատենակալներ (12)։ Դատը տևեց ամբողջ 4½ ժամ. հակառակ կողմերի վիճաբանութիւնները, պատասխանները երբեմն վրդովմունքի և յուզմունքի չափեր էին ստանում կամ անօրինակ պաթօսի աստիճանները շօշափում... բայց այդտեղ, կարծես, բացակայում էր դատի գլխաւոր տարրը, այն է մեղադրեալը, կամ ուրիշ խօսքով՝ ընդհանուր դատավարութեան պրօցեսը չը պարզեց հասարակութեան համար այն հարցը, թէ մեղաւո՞ր է Շանթը, մեղաւո՞ր են նրա հերոսները և եթէ մեղաւոր են՝ ինչո՞ւ համար։

Սակայն ամենից առաջ թատրոնը լցված հասարակութեան համար հետաքրքրական պիտի լինէր մի կարևոր հանգամանք. ինչ նոր բան պիտի ասի նրան այս դատը Շանթի նոր դրամայի մասին. չէ որ մամուլի մէջ շատ գրվեց նրա մասին, տեղի ունեցան դասախօսութիւններ և զրոյցներ։ Եթէ մենք ուզենանք այդ հարցին որոշ պատասխան տալ, կասենք, որ ոչինչ նոր բան չասաց դատարանը։ Սկզբից մինչև վերջ կրկնողութիւն էր այդ դատը. նա ասում ու ճառում էր այն, ինչ որ արդէն ասվել ու գրվել էր. նա երկար ու բարակ կանգ էր առնում այն եզրակացութիւնների վրա, որոնք մամուլի կամ դասախօսութիւնների մէջ հակիրճ ու որոշ կերպով ասվել ու ձևակերպվել էին։

Մեղադրողներից մէկը՝ Ա. Յարութիւնեանը համարեա ամբողջովին կրկնեց իր դասախօսութիւնը, որ նա կարդացել էր Թիֆլիսի ժողովարանում անցեալ օր. նրա եզրակացութիւններից միայն մէկը ճիշդ էր. դա այն էր, որ «Հին Աստուածների» վանահայրն ու աբեղան բացասական են իբրև հերոսներ մարդկային կեանքի պրօցեսի և ապագայ հասարակութեան տեսակէտից, որովհետև մէկը հեռանում է կեանքի պայքարից, քարոզելով ամլութիւն, իսկ միւսը իր մէջ կրում է մի խեղճ, որը հակասութիւններով ու սօցիալական անարդարութիւններով լի ժամանակակից կեանքն է։ Միմիայն այս տեսակէտն էր, որ պէտք է իր ամբողջ էութեամբ հրապարակ գար այդ դատական պրօցէսի մեղադրական մասում, որպէսզի գրուածքի հասարակական կորիզը ամբողջովին երևար հանդիսականների համար։ Բայց այդ մասին քիչ բան չէ ասված «Մշակի» 11-րդ և 12-րդ համարներում մեր գրած ռեցենզիայի մէջ, ուստի այդ տեսակէտը միանգամայն նոր և ոչ մի տեղ չարտայայտված չէ կարող համարվել։

Եւ եթէ Ա. Յարութիւնեանը այս դատական պրօցէսում իբրև մեղադրող ձախակողմեան էր, նրա միւս ընկերակիցը՝ Մատինճեանը՝ իբրև մեղադրող աջակողմեան էր։ Նա հանդէս էր եկել ոչնչացնելու Շանթի գրուածքի միմիայն գեղարուեստական արժէքը, թողնելով մի կողմ հասարակականը։

Նա խօսում էր պարզ և հասկանալի, բայց նրա մէջ տեղ-տեղ աւելի գերակշռում էր ապլօմբը, քան խօսքի էութիւնը։ Նա համոզված էր, որ Շանթի այս գործը ոչնչացնելու համար նոր բան էր ասում իր առաջ կանգնած հասարակութեանը, մինչդեռ նրա բոլոր ասածներն էլ կրկնողութիւններ էին, իսկ նրա տեսակէտը՝ գեղարուեստական մի երկ քննադատելու համար՝ միանգամայն հնացած տեսակէտ է։ Որ նրա ասածները նորութիւն չէին, ապացոյց «Մշակի» 12-րդ համարի մեր յօդուածը։ Մատինճեանը մի առանձին թափով շեշտում էր, որ «Հին-Աստուածները» դրամա չէ և գործողութիւն չունի իր մէջ։ Թերթեցէք «Մշակի» վերոյիշեալ համարը և կը տեսնէք, որ Մատինճեանի ասածը կրկնողութիւն է եղել։ Այնտեղ գրված է, որ Շանթի «Հին Աստուածները» իր ներկայ կերպարանքով բեմական գրուածք չէ. որ դա աւելի շուտ դրամատիքական մի պօէմ է, քան ժամանակակից մտքով դրամա, որ նրա մէջ գործողութիւնը պակասում է, որ գործող անձինք չեն կարող միայն խօսելով զբաղվել։ Ապա նոյն յօդուածում ընդգծված է, որ գրուածքը ամբողջութիւնից զուրկ է, որ նա ունի երկու կենտրոն, որոնք իրար վնասում են, որ նա զուրկ է ընդհանուր համաչափութիւնից, ունի ձգձգված, անկապ տեսարաններ, ուստի և դրամա համարվել չէ կարող։ Ապա՝ գտնելով որ Շանթի լեզուն քնարական է, Մատինճեանը չէ բացատրում, թէ ինչու է այդպէս։ Մեր կարծիքով, այդ հարցը լուծվում է անմիջապէս, երբ մենք Շանթի «դրամա» բառը դարձնում ենք «դրամատիքական պօէմ»։ Բայց միթէ խնդիրը տերմինի մէջ է։ Մատինճեանը չէ բացատրում այդ բանը, և գուցէ ի պաշտօնէ, բայց միթէ նա պէտք է դառնայ բծախնդիր քերական՝ նոյնպէս ի պաշտօնէ։ Նա կարծում է, թէ եթէ այդ գրուածքում հանդէս եկող քարտաշի բերանը Շանթը դնում է գրական դարձուածքներ, դրանով նա յանցանք է գործում։ Միթէ ընդհանուր գրականութեան մէջ միևնոյնը տեղի չէ ունենում. միթէ հէնց եւրոպական նման գրուածքների մէջ բոլոր հերոսները միատեսակ լեզուով չեն խօսում։ Վերցրէք հէնց Իբսէնի

«Բրանդը», այդ նշանաւոր դրամատիկական պօէմը։ Բայց Մասեհեանը դէմ է, երբ եւրօպական գրականութեան օգնութեանն են դիմում. Նա դէմ է, երբ Շանթի վրա այս ու այն եւրօպական հեղինակի ազդեցութիւնն են նկատում, երբ յիշում են այդ գրականութեան կօլօսների անունները։ Նա գտնում է, որ չարժէ Շանթի գրուածքին այդ տեսակէտից մօտենալ. Նա վճռում է հանգիստ թողնել Շէկսպիրին ու Գէօթէին և քննել «Հին Աստուածները» տնավարի կերպով, «Պէպօյի» հետ համեմատելով... Եւ սակայն, օ զարմանք, այս մեղադրողը մոռանում է և Պէպօյին, և Սունդուկեանին և, ինչպէս ճիշդ նկատեց պաշտպաններից մէկը, սկսում է գերեզմաններից դուրս քաշել Էսքիլէսին, Եւրիպիդէսին, Սօֆօկլէսին և կեղծ կլասիկներին։ Ինչքն էին նրանք՝ Շանթի լեզուն քննադատելիս։ Այդ օրը յանձին Մասեհեանի խօսում էր աւելի քերականը, քան գրական քննադատը։

Սուրխաթեան

(Վերջը միւս անգամ)

—

Դատարանը յայտարարեց իր հետեւեալ որոշումները. 1) «Հին Աստուածները» դրամա չէ, այլ դրամատիկական պօէմա. 2) իբրև գրուածք արժէքաւոր է. 3) մտածել է տալիս, բայց չէ յուզում. 4) տիպեր չը կան. 5) արդար են թէ վանահայրը և թէ աբեղան իբրև անհատներ իրանց ձգտման մէջ, բայց հասարակական տեսակէտից վնասակար են. 6) իրաւունք ունէր, արդեօք, իշխանուհին սիրելով մէկին՝ գնալ ուրիշ մարդու։ Այդ հարցին դատարանը պատասխանեց. այո, քանի որ բոլոր ամուսնութիւնները սովորական երևոյթ են եղել։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 2 փետրվարի

Յայտնում եմ, որ իմ կազմած «Ռուսահայ գրականութեան պատմութեան» բոլոր 4 պրակները կովկասեան ուսումնական շրջանի հոգաբարձուի կողմից արդէն թոյլատրված է գործածելու միջնակարգ դպրոցներում, իբրև դասագիրք։

Թոյլատրվում է նոյնպէս և «Գրական նմուշներ» վերնագրով ձեռնարկը, որը յարմարեցված է դասագրքին։ Աշակերտները ձեռքի տակ պիտի ունենան այդ ժողովածուն, որպէսզի դասարանում կարդան և վերլուծեն հեղինակների գրուածքներից ընտիր հատուածներ։

Լեօն Մանուէլեան

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—

◆ «Secolo»-ն յայտնում է, որ Իտալիան վճռել է իրան թողնել Ռոդոսն և միւս կղզիները. Նա ուլտիմատում կուղարկէ Բ. Դրան՝ յետ կանչել զօրքերի մնացորդներին Կիրէնաիկէից կամ փոխել հաշտութեան պայմանները։

◆ Թիւրքաց կառավարութիւնը հրովարտակ հրատարակեց ամնիստիայի մասին, վերաբերեալ բոլոր քաղաքական յանցագործութիւններին մինչև փետրվարի 1-ը։ Ամնիստիան չէ տարածվելու նրանց վրա, որոնք նկատված են իբրև կողմնակիցներ Թիւրքիայի թշնամիներին։

◆ Չերնօգօրիան վերջին պարտութիւնների պատճառով օգնութեան համար դիմեց Ռուսաստանին։

◆ Չաթալջայի մօտ Թիւրքերը մի շարք յաղթութիւններ տարան։ Առանձնապէս աչքի ընկաւ չերքէզների հեծելազօրը իշխան Աբաշիձէի հրամանատարութեան ներքոյ։

◆ Բուլաիրի մօտ սպանվեցին ու վիրաւորվեցին 12,000 Թիւրք։ Այս համաձայն պաշտօնական տեղեկութիւններ են։ Մինչդեռ բօլգար ժողովրդի մէջ շշուկներ են պտտվում, որ Թիւրքերի կորուստները շատ մեծ են. պակաս չեն նաև բօլգարների տուած կորուստները։

◆ Շարքեօյի մօտ վերջին կռւում Թիւրքերը ունեցան կորուստներ 5000 սպանված ու վիրաւոր։

◆ Թիւրքերը միաժամանակ վճռական յարձակման դիմեցին Չաթալջայում, Ռոդոստոյում և Գալիպօլիում։

◆ Կ. Պօլսի զօրքերի մէջ երևացել են խօլերայի դէպքեր։

◆ Խօսում են, որ Թիւրքիան անմիջապէս դիմելու է Բօլգարիային հաշտութեան վերաբերեալ։

◆ Բօլգարները գրաւեցին երկու շատ կարևոր դիրք Ադրիանուպօլսի տակ։

◆ 47,000 Թիւրք զինւոր ուղարկվեցին Ռոդոստո, 60,000 զինւոր էլ Շարքեօյ։

◆ Դէրկօս լճի մօտ 1700 Թիւրք և լազ, ընկնելով բօլգարների թակարդի մէջ, գլխովին ջարդվեցին։ Փրկվեցին միայն 30 ը։

◆ «Н. В.»-ի աշխատակից Ստօլիպինը հեռագիր ստացաւ Բէլգրադից, թէ Տարաբօշը ընկել է չերնօգօրցիների ձեռքը։

◆ Յունաց զօրքերը գահաժառանգի առաջնորդութեամբ կատաղի արշաւանք են սկսել Եանինան վերցնելու նպատակով. Նրանց զոհերի թիւը շատ մեծ է։

◆ Սկիւտարի դրութիւնը կրիտիկական է։ Սերբ զօրքերը վագրի նման յարձակումներ են գործում բերդի վրա, չը նայած ահագին զոհերին։

◆ «Н. В.»-ի թղթակիցը հեռագրում է, որ շատ աւստրիացի գործակալներ և օֆիցերներ շրջում են այժմ Ալբանիան և սերբերից նուաճված ալբանական տեղերը և գրգռում են խաղաղ ալբան ազգաբնակութիւնը սերբերի դէմ. Այդ ագիտացիայի շնորհիւ կազմակերպվել են բազմաթիւ ժանդէգական հրոսակախմբեր, որոնք յարձակումներ են գործում քրիստոնեաների վրա։

◆ Թիւրքիան ընկել է անճար դրութեան մէջ. Վերջին հանապազօրեայ լուրջ պարտութիւններից յետոյ նա աշխատում է եւրօպական մեծ պետութիւնների միջոցով հաշտութիւն կնքել բալկանեան պետութիւնների հետ։ Այդ նպատակով այժմ Եւրօպա է մեկնել Հակկը-փաշա։ Սակայն դաշնակիցները պահանջում են Թիւրքիայից՝ հաշտութիւնից առաջ վճարել $1^1/_2$ միլիարդ պատերազմական տուգանք։

◆ Կ. Պօլսում Թիւրքաց ոստիկանութիւնը ծեծեց ռուսաց դեսպանատան պաշտօնեաներից մէկին։ Այդ առիթով «Н. В.» գրում է. «Միթէ անզգոյշ կրակոցից յետոյ երիտասարդ Թիւրքերը կամենում են առաջ բերել իսկական հրդեհ»։

◆ Ինչպէս հեռ. գործ. հաղորդեց Կ. Պօլսից, Բօսֆօրի մօտ կանգնած ռուսական «Ռոստիսլաւ» զրահանաւից մի պատահական կրակոց եղաւ դէպի քաղաք։ Ռուսաց դեսպանը և նաւապետը ներողութիւն խնդրեցին մեծ վէզիրի առաջ և հարցը համարվեց սպառված։ Բայց գերմանական լրագիրների ասելով՝ գնդակը ընկել է սուլթանի զբօսանաւը, իսկ այստեղից էլ մօտակայ մզկիթը։

◆ Կ. Պօլսից Թիւրքաց իշխանութիւնները սկսել են արտաքսել քրիստոնեաներին, մանաւանդ յոյներին և բօլգարներին։

◆ Իտալիան «Pisa» և San Marco» ռազմանաւերով 160,000 գերմանական մաուզէր հրացան և փամփուշտ ուղարկեց Թիւրքիայի համար։

◆ Հնդկաստանի և Եգիպտոսի մահմեդականների մէջ յօգուտ Թիւրքիայի հանգանակվեց ընդամենը 150 հազար ֆունտ։ Հարուստ մահմեդականները չը գնեցին Թիւրքաց պետական գանձատան արժեթղթերը։

◆ Ռումին-բօլգարական վէճը մտաւ նոր փազի մէջ. Ռումինիան դիմեց Աւստրիային, խնդրելով հանդէս գալ իր շահերի համար և պահանջել Սօֆիայից արագացնելու բանակցութիւնները։ Այդ պահանջը իրականացնելու համար հաւաքական քայլ է լինելու Սօֆիայում Իտալիայի, Աւստրիայի և Գերմանիայի կողմից։ Ռուսաստանը այդ քայլից խուսափեց։

◆ «Н. В.»ն պահանջում է Ռուսաստանից՝ օգնել բօլգարներին։

◆ «П. Г.»-ին հեռագրում են Բրիւսէլից, որ Աւստրիայում վերջերս կատարվող ընդարձակ ձերբակալութիւնները ռուսների շրջաններում հետևանք են տխրահռչակ Ազեֆի նոր գործունէութեան, որ ղեկավարում է աւստրիական զինւորական լրտեսութիւնը։

◆ «Н. В.»-ի Բերլինի թղթակիցը հաստատ տեղեկացաւ, որ Բ. Դրան բոլոր ջանքերը՝ փոխառութիւն կնքելու Գերմանիայում՝ հանդիպեցին լիակատար անաջողութեան։

◆ Սալար ուդ-Դօվլէն Խորասանի և Մէշէդի ազգաբնակութեանը ապստամբութիւն է քարոզում առանձին թռուցիկներով։

◆ Ոստիկանութեան բարենորոգումը գործադրվելու նախ Ռուսաստանի կենտրօնական ու ներքին նահանգներում, յետոյ միայն ծայրերկրներում։

◆ Վլադիկավկազի մօտերը գտնվեցին ոսկու հանքեր։

◆ «Рѣчь»-ի ասելով՝ ներքին գործերի մինիստր Մակլակօվը որոշել է կազմակերպված կռիւ մղել սօցիալիստական մամուլի դէմ։

◆ Յայտնի երգչուհի Վեալցեվան մերձիմահ է։

◆ Կրակօվում կենտրօնացած ռումինական զօրքերը հրաման ստացան անմիջապէս շարժվել դէպի բօլգարական սահմանը։

◆ Պետական Դումայում աջակողմեանները բլօկ կազմեցին նացիօնալիստների հետ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

2 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գրաւվեցին «Правда»-ի, «Лучъ»-ի և «Вечернее Время»-ի համարները։

ՔԻՇԻՆԵՎ։ «Другъ»-ի խմբագիրը ներքին գործերի մինիստրի նախկին օգնական Խարուզինի մասին գրած յօդուածի համար դատապարտվեց հինգ ամսով բանտարկութեան։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Տաֆտը veto դրեց այն օրինագծի վրա, որ արգելում էր անգրագէտ գաղթականների մուտքը Ամերիկա։

ԲՐԻՒՍՍԷԼ։ Քաղաքագլուխը խորհրդակցութեան հրաւիրեց փետրվարի 10 ին Բելգիայի խոշոր քաղաքների քաղաքագլուխներին ընդհանուր գործադուլի հարցի քննութեան համար։

ՄՕՍԿՎԱ։ Եկաւ մօնգօլական դեսպանութիւնը։

3 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Դումայի զինւորական և ծովային գործերի մասնաժողովը գաղտնի նիստում ամբողջովին ընդունեց այն օրինագիծը, որ միջոցներ է յատկացնում պետական ինքնապաշտպանութիւնը կատարելագործելու համար, յայտնելով մի շարք ցանկութիւններ վերջին մտքով։

Արտասահման մեկնեց իտալական դեսպան Մելէգարին։

Փակվեց վարկային քաղաքային ընկերութիւնների ներկայացուցիչների համագումարը ֆինանսների մինիստրի ներկայութեամբ, որ խոստացաւ աջակցել համագումարի որոշումների գործադրութեանը։

ԽԱՐԿՕՎ։ Վախճանվեց տեխնօլօգիական ինստիտուտի պրօֆ. Բէլիանկինը։

ՕԴԵՍՍԱ։ Վախճանվեց Խէրսոնի և Օդեսայի արքեպիսկոպոս Դիմիտրին։

Խմբագիր՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Թ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Առողջութեան Համբաւաբեր

«Դ-ր Մէյէրի Ստոմօկսիգէնը» իբրև լուծողական չէ ներկայանում, այլ բնական պահանջի կատարումը դնում է նորմալ դրութեան մէջ։ «Ստոմօկսիգէնը» ոչ միայն ժամանակաւոր է անհետացնում կապութիւնը, այլ միանգամայն բուժում է նրան։

Դ-ր Լուինին, Մօսկվա։

ԴԵՂԱՏՈՄՍԸ

Վերցրէք մօտակայ դեղատնից «Դ-ր Մէյէրի Ստօմօկսիգէնից» մի արկղիկ և ընդունէք 1—2 տաբլէտկա օրական 3 անգամ՝ մինչև որ Ձեր մարսողութիւնը կը կանօնաւորվի։

«Դ-ր Մէյէրի Ստօմօկսիգէնը» էժան դեղ է. նա միանգամայն անվնաս է։ Առողջացումը կատարեալ է լինում։ (Ա. 15976)

Չափահասների համար

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

Բժշկ. ֆէլդշէր Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆԻ

1) «Գաղտնի հիւանդութիւնների բժշկարան» (կանանց և տղամարդկանց վեներական և այլ ցաւեր), բազմաթիւ բէցէպտներով, խորհուրդներով և նկարներով։ Անհրաժեշտ բժշկարան է ամեն մի չափահաս մարդու համար, նամանաւանդ այնտեղ, որտեղ չը կան մասնագէտ բժիշկներ։ Լեզուն շատ պարզ ու ամենքին հասկանալի։ Գինն է 50 կ.։
2) «Տրիպէր (սուսանակ) եւ նրա բժշկութիւնը» բէցէպտներով, բազմաթիւ խորհուրդներով ու նկարներով։ Գինն է 20 կոպ.։
3) «Կնիկարմատի ցավարը կամ մօդնի իւրկէն», խիստ ծիծաղաշարժ վօդվիլ միմիայն չափահասների համար։ Գինը 20 կ.։
4) «Սօնայի նշանդրէքը» յայտնի վօդվիլը, շատ ծիծաղաշարժ. 2-րդ հրատարակութիւն։ Գինը 20 կ.
5) «Հայ կերիձները», պատմուածք հայ-թուրքական կռիւներից. հայ քաջերի կռիւը։ Գինը 7 կ.։
6) «Միևնոյն դագաղում», պատմուածք հայ-թուրքական կռիւներից. դէպքերի նկարներով։ Գինը 7 կ.։
7) «Մօսական զօրք եւ միլիցիա» Պիմէնովից թարգմանած։ Գինը 5 կ.։

Ուղարկվում են բոլոր գրքերը միասին (հատ-հատ ուզողները դիմեն «Գուտտենբերգ» գրախանութին)։ Պահանջողները պէտք է առաջուց ղրկեն գրքերի գինը մարկաներով։ Հասցէն՝ Тифлисъ, Семеновская ул. № 9. Медицинскому фельдшеру А. Г. Есаянцу.

(օ. մ.) 44. 100—7

ՍՏԱՄՈՔՍԸ ԿԱՆՈՆԱՒՈՐԷՔ, ԻՆՉՊԷՍ ԺԱՄԱՑՈՅՑԸ...

Եթէ աղիքները կանոնաւոր չեն գործում և ժամերով ուշանում է գործողութիւնը, եթէ լեզուն սպիտակած է, շնչառութիւնը ծանր, երեսի գոյնը դեղին, կամ թէ մարսողութիւնը անբաւարար, այն ժամանակ հարկաւոր է գործադրել «Սկավուլին» լուծողականը, որը չէ գրգռում աղիքները, ներգործում է քնքոյշ և դուրալի կերպով։

ՍԿԱՎՈՒԼԻՆԸ
լուծողական է, գեղհատիկներով, առանց համի և հոտի։
(B. 1977)



(M.529879/529905)

№ 4711. Ճարպայ
շպար

ՏԱԼԻՍ Է ԸՆԴՄԻՇՏ ԹԱՐՄ ԵՐԻՏԱ
ԴՈՒԹԵԱՆ ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆ։ Գնելուց
ուշադրութիւն դարձնել որպէսզի տ
«№ 4711 ճարպային շպար»
4711-ը օրէնքով հաստատված է
ՖԵՐԴ. ՄԻՒԼՀԵՆՍ Պարֆիւմ
№ 47
ԿՕԼՆ Ռ./վ. և ՌԻԳԱ։ Մասնակ. Ն. Մ. Ռ. Բ.
2—1

ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ

Սպերմին-Պէլիով օգտվող հիւանդներին աշխատում են խաբել մեծախօսում բէկլամներով սերմային երկաթից պատրաստված հեղուկների մասին, ըստ որում ռէկլամների մէջ անամօթաբար խեղաթիւրում են փաստերը և ժամանցոյց են նում եւրօպական գիտնականների անուան և աշխատութիւնների վրա, մինչ այդ գիտնականները երբեք չեն տեսել այդ պրէպարատները։ Մենք մեր պարտ ենք համարում նախազգուշացնել հիւանդներին այդ մահլամներից, որովհետ նրանք՝ չունենալով ոչ մի առնչութիւն Սպերմին-Պէլի հետ՝ շատ անգամ պարու նակում են իրանց մէջ հակաառողջական նիւթեր։

Նեվրաստենիայի, սեռական թուլութեան, զառամութեան, իստէրիկայի, նեվրալգիայ սակաւարիւնութեան, թոքախտի, սիֆիլիսի, սնդիկային բժշկութեան հետեւանքներ սրտի հիւանդութիւնների (շաղութիւն, սրտի պնդախտութիւն, սրտի բաբախում, պէրէբօյ, միօկ դիտ), զարկերակի կարծրացումի, ալկօհօլիզմի, ողնաշարի հիւանդութեան, կաթուած ների, հիւանդութիւններից առաջացած թուլութեան, յոգնածութեան և այլ հիւանդութիւ ների ժամանակ միայն Սպերմին-Պէլի գործածութեամբ կարելի է հասնել այն փայլուն հետևանքնե րին, որոնց մասին վկայում են ամբողջ աշխարհի յայտնի գիտնականների և բժիշկների գիտութիւնն

Հարկաւոր է ուշադրութիւն դարձնել ՍՊԵՐՄԻՆ-ՊԵԼԻ անուան վրա և մերժել բոլոր մահլամները և կե ղծիքները զանազան անուններով, որոնց անվնասու թեան մասին հրատարակված է առանձին բրօշիւր, որն ուղարկվում է ձրի՝ Սպերմինի մասին եղ նորագոյն գրականութեան հետ միասին։

ՍՊԵՐՄԻՆ ՊԷԼԻՆ ԿԱՐԵԼԻ Է ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ԲՈԼՈՐ ԴԵՂԱՏՆԵՐՈՒՄ ԵՒ ԴԵՂԱՎԱՃԱ ԽԱՆՈՒԹՆԵՐՈՒՄ։

ОРГАНОТЕРАПЕВТИЧЕСКІЙ ИНСТИТУТЪ
Профессоръ Д-ръ ПЕЛЬ и С-ья
Поставщики Двора
ЕГО ИМПЕРАТОРСКАГО ВЕЛИЧЕСТВА
С.-ПЕТЕРБУРГЪ.
(П. 1467) 12—4

Ներսիսեան Հայոց Հոգևոր Դպրոցի Հոգաբարձ թիւնը սրանով յայտարարում է ի գիտութիւն, որ նա վաճառում է Նոր կառո դպրոցական շէնքի մօտ դպրոցապատկան հողաբաժինները։ Վճարքը կա վում է կանխիկ կամ 5 տարվայ ընթացքում մաս մաս 7% վերադիր յաւելումով։

Վերջնական գները և մակարդակը, քաղաքային վարչութեան կողմից հաստա կարելի է տեսնել հոգաբարձութեան դիւանատան մէջ ամեն օր, բացի կիրակի օրերից։ (օ.մ.) 51. 10—

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ 11—12 ժ.

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեա վեներական (սիֆիլիս) հ.։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—1—2 ժ. ներքին և երեխայոց հիւ.։
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Ջ. Ի. ԲԱՐԱՆՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական վիրաբուժութեան և միզասեռ. հ.։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ԱՄԲՐՈՒՄՕՎԱ-ՄԵԼԻՔԵԱՆ —12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։
ԿԻՆ ԲԺԻՇԿ Մ. Լ. ՌԵՆԻԳԵՐ-ԱՐԵՎՇԵՎԱ—6—7 ժ. մանկաբարձութիւն, կանանց և երեխայոց հիւ.։

Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—14

ПОРТНОЙ
Леонъ Джебеян

Принимаетъ заказы на ул. Паскевича
Имѣя дипломъ Высшихъ Академиче Курсовъ кройки, обучаю желающихъ ныхъ или подмастерьевъ полный курсъ ки мужскаго платья по новой коорди системѣ за умѣренную плату.
(4.) 72.

Առաջարկում եմ

խմբագրութիւններին և հրատարակիչ
ԻՄ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ
1) Արասխանեան և իր դարը։
2) Լերմոնտովի «Демонъ»-ի հայ աղբիւրը։
3) «Դաւիթ և Մհեր» ազգային վէ
4) Զորրորդ դարի պատմութեան ժողովրդական նիւթերի մէջ։
5) «Հովսյի Եղօ», մասն Բ., վէպ խանու կեանքից։

Դիմել՝ Շուշի, ուսուցիչ Գրիգոր Պօղոսեանին։
(օ. մ.) 80.

„ԱՂԲԻՒՐԻ“ եւ „ՏԱՐԱԶԻ“

Բաժանորդագինը 25 յաւելուածներով եւ պրէմիաներով, տարին 10 ր. (արտասահման 18 ր. կամ 50 ֆր.),

Դպրոցական աշակերտների համար յունվարի 20-ից յետոյ առանց պրէմի 5 ր., միայն «ԱՂԲԻՒՐԸ» աշակերտների համար տարին 2 ր.։

Նրանք, որոնք չեն վերանորոգել իրանց բաժանորդագրութիւնը, չեն ուղար լոյս տեսած №№-ը։ Ապառիկ եւ մաս-մաս բաժանորդագրութիւն չէ ընդունվում պատուէրները, առանց բացառութեան, մնում են անկատար։

„ԱՂԲԻՒՐԸ“ եւ „ՏԱՐԱԶԸ“ հրատարակվում են այնքան բազմաբովանդակ, ՊՐԷՄԻԱ այնքան են նշանակալից ու անհրաժեշտ ամեն հայի տան, որ մենք աւելորդ ենք րում մանրամասնել։ Այսու յայտարարում ենք, որ յունվարի 20-ից յետոյ բաժա գրվող դպրոցական աշակերտները (5 ր. վճարող) չեն ստանալու պրէմիաներ։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Агбюръ“-„Таразъ“. Tiflis. Diréction „Agbür“-

Ծանօթ.—Տարեկան 10 ր. վճարող բաժանորդը իրաւունք ունի ամեն օր ԳՐԱԿԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՍԱԼՕՆԻ ընթերցարանը և յաճախել բոլոր jour fixe-եր
31. 0-

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԿՈՎ ԿԱՍԻ ՓՈԽԱՐ
ԴԻՒԱՆԱՏԱՆ ՏՊԱՐԱՆԸ
(ԼՕՐԻՍ-ՄԵԼԻՔՕՎՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ, ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ՏՈՒՆ)

կատարում է ամեն տեսակ տպարանական աշխատանքներ, այն է՝ տպագր լրագիրներ եւ ամսագիրներ, գրքեր, բրօշիւրներ, բլանկներ, աֆիշաներ, ծրագ հարսանեկան հրաւիրատոմսեր, այցեքարտեր եւ այլն։

Ընդունվում են տպագրական պատուէրներ հետեւեալ լեզուներով՝ ռուսերէն, հայերէ ներէն, Թուրքերէն, ֆրանսերէն, գերմաներէն, արաբերէն և լեհականների բար Պատուէրները կատարվում են մաքուր, ճշդօրէն և չափաւոր գներով։ Ընդունվում շուտափոյթ կատարվելիք պատուէրներ առանձին պայմաններով։

Պատուիրողների ցանկութեան համաձայն, տպարանը պատուէրները կարող է մել տալ, կամ բրօշիւրներ շինել, ու այնու յանձնել։

ԿԱՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿ ԹՂԹԵՐ ՊՐԷՍ-ԿՈՒՐ ԳՆԵՐՈՎ։

Տելեֆօն № 67.

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный